ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 8/11

Քաղ.Երեւան **25 փետրվար 2011թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ՝ Ա.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս. Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Բաբայան, Ա. Հ. Աբգարյան Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2011թ. փետրվարի 25-ի նիստում (արձանագրություն N 2/3) քննարկեց «Yousef S. Al Rajhi Trading Est.» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Է. Նահապետյանի կողմից 2011թ. հունվարի 17-ին ներկայացված «DR.CAFE» (հայտի համարը՝ IR 1000872) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք է հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, համաձայն որի «նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն չունի տարբերակիչ հատկություն, բացառապես բաղկացած է նկարագրական և գովաբանական բնույթ ունեցող տարրերից, այսինքն նրանք ուղղակիորեն նկարագրում և ցույց են տալիս նշված բնութագրերը, այն է "CAFE" բառը, որը թարգմանաբար նշանակում է «ՍՈՒՐՃ» և սուրճի բաժակի պատկերը առևտրում ծառայում են ապրանքի արտադրության և ծառայության մատուցման տեսակը և նպատակը նշելու համար «THE BEST COFFE IN THE WORLD» արտահայտությունը, որը թարգմանաբար նշանակում է "ԱՇԽԱՐՀԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՈՒՐՃ" տալիս է հայտում նշված ապրանքներին գովաբանական բնույթ:

Բողոքում ներկայացված է, որ 03.11.2010թ. կրկնական փորձաքննությունը մերժման որոշում է կայացրել վերոհիշյալ ապրանքային նշանի IR 1000872 միջազգային գրանցման վերաբերյալ, որի համաձայն նշանը չի կարող գրանցվել, քանի որ զուրկ է տարբերակիչ հատկությունից և բաղկացած է նկարագրական և գովաբանական բնույթ ունեցող տարրերից:

Փորձաքննության դիրքորոշումը չի բավարարում հայտատուին, և բողոքարկողը խնդրում է վերանայել այն ըստ ստորև բերված փաստարկների:

Բողոքում ներկայացված է, որ հայտարկվող նշանն իրենից ներակայացնում է քառակուսի շրջանակի մեջ ամփոփված մի պատկեր, որի մեջ առկա է բաժակի և ափսեի ոճավորված պատկեր, որի տակ տեղ է գտել dr. CAFE գրությունը (թարգմանաբար նշանակում է «բժիշկ կաֆե»), իսկ դրա տակ սև զոլի մեջ ավելի մանր տառաշարով զետեղված է «The best coffee in the world» (թարգմանաբար՝ աշխարհի լավագույն սուրճը) արտահայտությունը: Բողոքարկողը նշում է, որ, նշանը հագեցած է այնպիսի տարրերից, որոնք իրենց համակցությամբ ստեղծում են մի ինքնատիպ դիզայն ունեցող նշան, որը տարբերակիչ հատկությունից զուրկ համարել չի կարելի, քանի որ, գրաֆիկորեն յուրաքանչյուր տարր համակցվելով, ստեղծում է սպառողի համար բավական տպավորիչ և տարբերակիչ պատկեր:

Համաձայն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 8 հոդվածի 1-ին մասի «Որպես ապրանքային նշաններ կարող են գրանցվել գրաֆիկորեն պատկերման հնարավորության ունեցող նիշերը, մասնավորապես՝ բառերը, բառակապակցությունները, անունները կամ կարգախոսները, նկարները, պատկերները կամ խորհրդանշանները»:

Բողոքարկողը նշել է, որ «dr. CAFE» գրությունը, որը նշանակում է «բժիշկ կաֆե», չի կարող նկարագրական համարվել այն պարզ պատճառով, որ հանդես է գալիս ոչ թե սուրճի իմաստով, այլ «dr.» (doctor՝ բառի հապավումը) տարրի հետ համակցվելով ակնհայտ է դարձնում այդ բառի որպես մարդու ազգանուն հանդես գալը, որի շնորհիվ այն տարբերվում և առանձնանում է CAFE բառը ներառող բազմաթիվ նշաններից: Բողոքարկողը նշել է, որ հայտնի են նմանատիպ բազմաթիվ նշաններ, որոնց հիմնական բառային տարրերը, Dr. (doctor) կամ Mr. (mister) բառերի հետ համակցվելով, ընկալվել են ոչ թե որպես նկարագրական բառեր, այլ որպես մարդկանց ազգանուններ և գրանցվել ՀՀ տարածքում: Դրանցից են, օրինակ DR. THEISS MULTIVITAMOL (գր. N 5033, դասեր 3, 5, 30), DR. THEISS NOVA FIGURA (գր. N 5036, դասեր 3, 5, 30), Dr.Fresh (գր. N 704659, դասեր 32, 43), Dr.WEB (գր. N 904755, դասեր 09, 42), Mr. ENERGIZER (գր. 650327, դասեր 09, 11), Mr. CHLOR (գր. N 715580, դասեր 01, 03) և բազմաթիվ այլ նշաններ:

Բողոքում նշված է, որ որպես կանոն, որևէ բնագավառում ապրանքային նշան ստեղծելիս համապատասխան մասնագետներն այնուամենայնիվ կիրառում են տվյալ բնագավառին բնորոշ պատկերներ, բառեր ու արտահայտություններ:

Բողոքարկողը նշում է, որ ինչ վերաբերում է այն հանգամաքին, որ բաժակի ու ափսեի ոճավորված պատկերը ներկայացվել է առևտրում որպես արտադրության և ծառայության

մատուցման տեսակը ցուցադրելու նպատակով, ապա նշում է, որ նման բնագավառում կան բազմաթիվ համակցված ապրանքային նշաններ, որոնք իրենց կազմում հիմնականում ներառում են այդ բնագավառին բնորոշ պատկերներ, իսկ ինչ վերաբերում է նշանի մեկ այլ բառային տարր հանդիսացող «THE BEST COFFEE IN THE WORLD» արտահայտությանը, ապա այդ դեպքում ընդունում է արտահայտության տարբերակիչ հատկությունից զուրկ լինելու հանգամանքը և համաձայն է վերջինիս դիսկլամացիային:

Ամփոփելով իր բողոքը և վերը շարադրած փաստարկները, բողոքարկողը նշում է, որ անենայն համոզմամբ կարելի է փաստել, որ դիտարկվող նշանն իր յուրօրինակ բառային և պատկերային տարրերի համակցությամբ օժտված է տարբերակիչ հատկությամբ, այսինք ունի ուրույն գրաֆիկական կատարում և ենթակա է պաշտպանության:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ 2010թ. հունվարի 17-ին ՀՀ արտոնագրային հավատարմատար Է. Նահապետյանի կողմից ներկայացվել է «DR. CAFE» (հայտի համարը՝ IR 1000872) համակցված ապրանքային նշանի միջազգային գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոք:

Ներկայացվեց, որ հայտը մերժվել է 30-րդ դասի ապրանքների և 43-րդ դասի ծառայությունների համար, նշվեց, որ CAFE բառը անգլերենից թարգմանաբար նշանակում է սրճարան, իսկ ֆրանսերենից՝ սուրճ և 30-րդ դասի ապրանքների և 43-րդ դասի ծառայությունների համար տարբերակիչ հատկություն չունի, քանի որ ըստ էության նշանակում է ապրանքի և մատուցվող ծառայության տեսակ, «THE BEST COFFE IN THE WORLD» արտահայտությունը, որը թարգմանաբար նշանակում է "ԱՇԽԱՐՀԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՍՈՒՐՃ" տվյալ հայտում նշված ապրանքների համար կրում է գովաբանական բնույթ և հետևաբար ապրանքային նշանը գրանցման ենթակա չէ:

Նշվեց նաև, որ սկզբնական ներկայացված հայտում «dr» տառերը հազիվ նշմարելի էին և ապրանքային նշանին տարբերակիչ հատկություն տալու նպատակով հետագայում փոփոխություն է կատարվել գրանցման մեջ: Այս դեպքում, եթե ապահովվել է նպատակը, ապա նշանի պատկերը համարվում է էապես փոփոխված, ինչը Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն հաշվի առնվել չի կարող:

Որպես կոլեգիայի կարծիքի դեմ առարկություն, բողոքարկողը նշեց բողոքում նշված հիմնավորումները:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման

խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 2-րդ ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Yousef S. Al Rajhi Trading Est.» ընկերության բողոքը «DR. CAFE» (հայտի համարը՝ IR 1000872) համակցված ապրանքային նշանի միջազգային գրանցման վերաբերյալ և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի

նախագահ Ա. Ազիզյան